ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» սեպտեմբերի 2025 թ. N 149-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ՓԱՐՈՍ-ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 11-ի և «ՎԱԼ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով «ՓԱՐՈՍ-ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-000624) «Ջրամատակարարում և ջրահեռացում» ենթատեսակի ներդիրի (ՔՊՆ-000624-08) գործողությունը:

2. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով «ՎԱԼ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Շինարարության իրականացում» 2-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-002832) և «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» ենթատեսակի ներդիրի (ՔՊՆ-002832-04) և 3-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-000795) և «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» ենթատեսակի ներդիրի (ՔՊՆ-000795-04) գործողությունը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

9/23/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ